ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-159-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**աղբավայրի հսկողություն՝** արտոնագրված աղբավայրի շահագործման արդյունքում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը ժամանակին հայտնաբերելուն և հետևանքները վերացնելուն ուղղված գործողություններ, որոնք իրականացվում են ուսումնասիրությունների, ակնադիտարկումների, զննումների միջոցով.

թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգ՝ թափոնների հեռացման (այդ թվում՝ ոչնչացման, վնասազերծման, տեղադրման) վայրերում և դրանց հարակից տարածքներում շրջակա միջավայրի տարրերի (հող, մթնոլորտային օդ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, կենդանական և բուսական աշխարհ) որակական ցուցանիշների վերաբերյալ տվյալների պարբերական հավաքագրում և մշակում՝ գործիքային չափումների, նմուշառումների և լաբորատոր փորձարկումների միջոցով.»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածը լրացնել «ը.1» մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ը.1) աղբավայրերի շահագործման ընթացքում հսկողության և մոնիթորինգի իրականացման կարգի սահմանումը.»:

Հոդված 3. Օրենքը լրացնել «17.1» հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 17.1 Աղբավայրերի հսկողությունը և մոնիթորինգը

1. Աղբավայրերի շահագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման և կանխարգելման նպատակով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով սահմանված աղբահանություն (աղբի հավաքում, փոխադրում և աղբավայրում տեղադրում) իրականացնող օպերատորի, ինչպես նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբավայրի և դրա հարակից տարածքներում Կառավարության սահմանած կարգով իրականացվում է հսկողություն:

2. Աղբավայրը շահագործող օպերատորը Կառավարության սահմանած կարգով աղբավայրում և դրա հարակից տարածքներում կազմակերպում և իրականացնում է մոնիթորինգ և Կառավարության սահմանած կարգին համապատասխան շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազորված մարմին է ներկայացնում մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

3. Աղբավայրերի շահագործման ընթացքում հսկողության և մոնիթորինգի իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 4. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: